ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«31» 01 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 014-24

Ձեռնարկողը՝ ***«ԳՐԻՆՀԱՈՒԶ» ՍՊԸ***
Ք.Երևան, Մ.Մելիքյան փ., 16 շ., 26բն.

Գործունեությունը՝ ***Արտաշատ համայնքի Շահումյան բնակավայրի 6/2 հողամաս հասցեում նախատեսվող 12 հա ջերմոցային համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
ՀՀ, Արարատի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 014 - 24

«31» հունվարի **2024թ.**

Արարատի մարզի Արտաշատ համայնքի Շահումյան բնակավայրի 6/2 հողամաս հասցեում նախատեսվող 12 հա ջերմոցային համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«ԳՐԻՆՀԱՈՒԶ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Արարատի մարզ,Արտաշատ, Շահումյան բնակավայր, 6/2 հողամաս

Ներածական մաս. «ԳՐԻՆՀԱՈՒԶ» ՍՊ ընկերությունը նախատեսում է Արարատի մարզի Արտաշատ համայնքի Շահումյան բնակավայրի 6/2 հողամաս հասցեում կառուցել ջերմոցային համալիր:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-150-Ն 03.05.2023) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «ա.» ենթակետի ներկայացված գործունեությունը դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

Նախատեսվող գործունեության նախագծային աշխատանքների համար հիմք է հանդիսացել պատվիրատուի հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ № 11102023-03-0067, /ծածկագիրը՝ 03-074-0256-004646/, Արտաշատի համայնքապետարանի կողմից 29.12.2023թ. տրված № 510 նախագծման թույլտվությունը /ճարտարապետահատակագծային առաջադրանք/: Հողամասի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն: Ջերմոցային համալիրի կառուցապատման ենթակա հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 12.28689 հա:

Նկարագրական մաս. «ԳՐԻՆՀԱՈՒԶ» ՍՊ ընկերությունը նախատեսում է կառուցել ջերմոցային համալիր ժամանակակից Եվրոպական տեխնոլոգիաների կիրառմամբ: Նախատեսվում է իրականացնել մշակաբույսերի աճեցում արտահանման նպատակով: Նախագիծը ներառում է ջերմոցային համալիրի կառուցում 12 հա՝ բաղկացած առանձին բլոկներից: Ըստ նախագծի ջերմոցային համալիրը ծածկված է պոլիէթիլենային թաղանթով, իսկ ոռոգումն իրականացվում է կաթիլային եղանակով: Կրող կոնստրուկցիաները նախատեսված է իրականացնել մետաղական կոնստրուկտիվ լուծումներով, որոնք մշակված են հակակոռոզիոն

հակաթթվակայուն նյութերով: Արտաքին երեսապատումը նախատեսված է իրականացնել երկշերտ պոլիէթիլենային թաղանթով, իսկ տեխնիկական օժանդակ կառույցներինը՝ սենդվիչ պանելներով, իսկ ջերմոցի տանիքը բազմաթռչիք է: Ջերմոցային համալիրն ընդգրկելու է կաթսայատուն, տեխնիկական սպասարկման հատված, գրասենյակային հատված, պահեստային տարածք: Նոր 12 հա ջերմոցային համալիրը կառուցվում է ընկերությանը պատկանող 30 հա ջերմոցային համալիրի անմիջապես հարակից տարածքում, ինչով պայմանավորված օգտագործվելու են արդեն իսկ ընկերության կողմից կառուցված ենթակառուցվածքները:

Ջերմոցային համալիր՝ 12 հա

- Հողամասի մակերես՝ 12,28689 հա
- Կառուցապատման մակերես՝ 11,856238 հա
- Ջերմոցի մակերես՝ 11.839238 հա

Ջերմոցային համալիրի կառուցման շրջանակներում կատարվող շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել հետևյալ ծավալով հողային աշխատանքներ՝ մինչև 50.000 մ^3 լիցք և հանույթ նույն վայրից: Բետոնային աշխատանքները հիմնականում կապված են սյուների տեղադրման և ամրացման հետ: Բոլոր սյուների հաշվարկով բետոնային աշխատանքների ընդհանուր մակերես՝ 1400 մ^2 է: Շինարարական աշխատանքների իրականացման համար նախատեսվում է ներգրավել շուրջ 100 աշխատակից, որից՝ ինժեներա-տեխնիկական անձնակազմ՝ 5 աշխատակից, բանվորական անձնակազմ, վարորդ՝ 95 աշխատակից: Շինարարական և մոնտաժային աշխատանքների իրականացման փուլի ընդհանուր տևողությունը, ըստ նախագծի, կկազմի առավելագույնը 730 օր:

Հողամասի հյուսիս-արևելքի հատվածից մոտակա արտադրական նշանակության շինությունները գտնվում են 0,839 կմ հեռավորության և 0,562 կմ հեռավորության վրա, 0,638 կմ հեռավորության վրա է գտնվում Արարատյան մայրուղու մասը, իսկ մոտակա բնակելի տունը՝ 0,871 կմ հեռավորության վրա: Կենտրոնական հյուսիսային հատվածից Արարատյան մայրուղի 0,983 կմ է: Հյուսիս-արևմտային հատվածից մոտակա բնակելի տունը գտնվում է 1,612 կմ հեռավորության վրա:

Նախատեսվող ջերմոցային համալիրի տարածքում զարգացած են կիսաանապատային գորշ, մնացորդային մարգագետնային ոռոգելի և աղուտ-ալկալի հողերը: Տարածքի գերակշռողը մասը աղուտներ են՝ մարգագետնային սոդա-քլորիդային կավային-կավավազային: Ջերմոցային համալիրի հողամասի տարածքում հողի բերրի շերտ առկա չէ: Նախատեսվող գործունեության արդյունքում նոր հողածածկ տարածքներ չեն ներառվելու, օգտագործվելու են արդեն օգտագործված տարածքները:

Նախատեսվող գործունեության ընթացքում կառաջանան միայն շինարարական թափոններ, որոնք նախատեսված է տեղափոխել Արտաշատի համայնքապետարանի կողմից տրամադրված աղբավայր: Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական և մոնտաժային աշխատանքների ընթացքում, շինարարական աղբն է օրական 100 կգ: Այն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Հաշվի առնելով ջերմոցային համալիրում կիրառվող նորագույն կանաչ տեխնոլոգիաները և արտադրական օրգանիկ ցիկլը ընկերության գործունեության ընթացքում հիմնականում առաջանալու է չտեսակավորված կենցաղային աղբ (օրական 15կգ), որը ներկայացված է ապակու, թղթի, կտորի, սննդի մնացորդներից:

Բուն նախատեսվող տարածքում պատմամշակութային և բնության հուշարձաններ չկան, տարածքը չի համընկնում նաև հուշարձանների պահպանության գոտիների հետ, ինչը բացառում է որևիցե բացասական ազդեցությունների դրսևորում պատմամշակության ժառանգության օբյեկտների վրա : Տեղամասում չեն արձանագրվել նաև ՀՀ Բույսերի կամ Կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ, հետևաբար ազդեցությունը տարածքի կենսաբազմազանության վրա լինելու է նվազագույն: Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պարտադիր նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև հայտի տեխնիկական պայմանները: Շինհրապարակը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով, շինհրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը: Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման համար (3832,5 մ^3/շին. ժամ), ինչպես նաև շինանձնակազմի խմելու-կենցաղային կարիքների համար (1792 մ^3/շին. ժամ): Շինարարության ընթացքում ընդհանուր ջրօգտագործումը կկազմի՝ 5624,5 մ^3/շին. ժամ: Հայտում հաշվարկված է նաև շահագործման փուլում նախատեսվող ջրապահանջարկը, հաշվի առնելով ջրակորուստները տարեկան ջրապահանջարկը կկազմի 385825 մ^3/տ: Օրական ոռոգման ջրապահանջարկը 365 օրյա ռեժիմի համար կկազմի 1057,05 մ^3/օր:

Նախատեսված է շրջակա միջավայրի վրա հնարավոր վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

-շինարարական աշխատանքներում փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրական 2-3 անգամ,

-ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

-շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը կիրականցվի փակ ծածկով մեքենաներով,

-սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,

-շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,

աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն Արտաշատի համայնքապետարանի կողմից հատկացված աղբավայր,

-շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

-պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,

-պարբերաբար կստուգվի շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և կիրականացվի կարգաբերումներ:

Բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/ մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները՝

ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ հաճախականությամբ:

2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրական 2-3 անգամ:

3.Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

4.Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

5. Շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում՝ համաձայն ՀՀ կառավարության 2020թ. հուլիսի 2-ի նիստի N 87 արձանագրության պահանջների:

6.Հարակից տարածքներում կենսաբազմազանության մոնիթորինգ 3 ամիսը մեկ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 3.000.000 դրամ:

Պատճառաբանական մաս. Նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Արտաշատի համայնքապետարանի վարչական շենքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ Առողջապահության, Ներքին գործերի, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, Քաղաքաշինության կոմիտեից, Արարատի մարզպետի աշխատակազմից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել Հայտի լրամշակումներում:

Ամփոփելով Հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:
2. Շինարարության ընթացքում որպես պարտադիր պահանջներ, անհրաժեշտ է

-շինհրապարակի տարածքում անցկացնել լուսավորություն և տեղադրել արգելափակիչ նշաններ,

-շինությունները ծածկել համապատասխան բարձրությամբ փոշու տարածումը կանխող ցանցով,

-շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ,

-բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

3. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների և մնացորդային գրունտի հեռացումն ու տեղադրումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Արտաշատի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
4. Համաձայն ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» որոշման՝ աշխատանքների կատարման ժամանակ ՀՀ կարմիր գրքում գրանցված բուսատեսկների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:
5. Շինարարության ընթացքում անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները: Կառուցման ընթացքում անհրաժեշտ է նաև պահպանել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2008 թվականի հունվարի 14-ի N 11-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում» շինարարական նորմերի պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԳՐԻՆՀԱՈՒԶ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված՝ Արտաշատ համայնքի Շահումյան բնակավայրի 6/2 հողամաս հասցեում նախատեսվող 12 հա ջերմոցային համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Աննա Սարգսյան

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS